«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Հետազոտության թեման՝ Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Առարկան՝ Ռուսաց լեզու

Հետազոտող ուսուցիչ՝ Գևորգյան Գայանե Ռուլևի

Ուսումնական հաստատություն՝ Ձովասարի միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3
Գլուխ 1 Ուսուցիչ-ծնող կապի կարևորության մասին..... 5
Ի՞նչ է նշանակում ծնողների ներգրավվածություն..... 8
Գլուխ 2 Սովորողների ընտանեկան դաստիարակության ազդեցությունը դպրոցում վերջիններիս վարքի և առաջադիմության վրա.....11
Ծնողների ներգրավվածության նշանակությունը..... 14
Ուսուցիչ և ծնողներ. հարաբերությունների համակարգ..... 15
Եզրակացություն.....19
Գրականության ցանկ.....20

Ներածություն

Ուսուցիչների և ծնողների միջև փոխհարաբերությունները կարևոր դեր են խաղում կրթական գործընթացում: Այս հարաբերությունները կարող են զգալի ազդեցություն ունենալ աշակերտների հաջողության, նրանց ընդհանուր բարեկեցության, նրանց մոտիվացիայի և, իհարկե, դպրոցներում տիրող ընդհանուր մթնոլորտի վրա: Այս հետազոտական աշխատանքում մենք դիտարկում ենք այս հարաբերությունների կարևորությունը, ուսուցիչ-ծնող փոխազդեցության հիմնական սկզբունքները և դրանց ազդեցությունը ուսումնական միջավայրի վրա:

Ի սկզբանե հարկ է ընդգծել, որ ուսուցիչների և ծնողների միջև համագործակցությունը հաջողակ կրթության հիմնարար կողմն է: Երկու կողմերն էլ ունեն ընդհանուր նպատակ՝ ապահովել աշակերտների զարգացման համար առավել բարենպաստ պայմաններ: Ուսուցիչները ունեն մասնագիտական գիտելիքներ և փորձ, որոնք օգնում են երեխաներին սովորել, կրթվել և զարգանալ: Ծնողները, իրենց հերթին, երեխաների առաջին ուսուցիչներն են և յուրահատուկ պատկերացում ունեն իրենց երեխաների անհատական կարիքների մասին: Այս երկու կողմերի փոխգործակցությունն ու համատեղ ջանքերն են, որ կարող են ապահովել ցանկալի արդյունք:

Կարևոր է նաև նշել, որ ուսուցիչների և ծնողների միջև հաջող հարաբերությունները կառուցված են փոխադարձ վստահության և բաց հաղորդակցության վրա: Աշակերտների հաջողությունների և խնդիրների քննարկումը, ինչպես նաև ուսուցման մեթոդների, ծնողական մոտեցումների և երկու կողմերի ակնկալիքների մասին տեղեկատվության փոխանակումը նպաստում է խնդիրների առավել արդյունավետ լուծմանը և ընդհանուր նպատակների իրականացմանը:Ուսուցիչների և ծնողների համագործակցությունը հաջող կրթական միջավայրի հիմքն է: Երբ այս երկու կողմերը միասին աշխատում են՝ աջակցելու երեխայի զարգացմանը, արդյունքները կարող են տպավորիչ լինել: Ուսուցիչները ունեն մասնագիտական գիտելիքներ և փորձ, որոնք կարող են օգնել օպտիմալացնել ուսումնական գործընթացը և հարմարեցնել այն աշակերտի անհատական կարիքներին: Մյուս կողմից, ծնողներն իրենց երեխայի ամենամոտ դիտորդներն են, նրանք լավ ծանոթ են նրա անհատական բնավորության գծերին ու առանձնահատկություններին:

Ուսուցիչների և ծնողների միջև հաղորդակցության թափանցիկությունը կարևոր է:

Ուսուցիչները պետք է պատրաստ լինեն կիսվել աշակերտի առաջադիմության և վարքի մասին տեղեկություններով, ինչպես նաև հաշվի առնել ծնողների հարցերն ու մեկնաբանությունները: Իրենց հերթին, ծնողները կարող են տեղեկություններ փոխանցել երեխայի կյանքի հանգամանքների մասին, որոնք կարող են ազդել նրա ուսման վրա:

Իհարկե, հնարավոր են տարաձայնություններ, թյուրիմացություններ ուսուցիչների և ծնողների միջև: Այնուամենայնիվ, պետք է հիշել, որ երկու կողմերն էլ ունեն ընդհանուր նպատակ՝ ապահովել լավագույն պայմանները երեխայի ուսման և զարգացման համար: Հակամարտությունների լուծումը պահանջում է փոխըմբռնում, հանդուրժողականություն և փոխզիջումների գնալու պատրաստակամություն:

Ուսուցիչների և ծնողների միջև արդյունավետ փոխհարաբերությունները օգնում են ստեղծել աջակցող ուսումնական միջավայր, որը խթանում է հետաքրքրությունը սովորելու նկատմամբ, զարգացնում է սոցիալական հմտությունները և նպաստում է երեխայի ընդհանուր բարեկեցությանը:

Վերջապես, այս հետազոտական աշխատանքում մենք կդիտարկենք նաև գործնական ռազմավարություններ և խորհուրդներ, որոնք կօգնեն ուսուցիչներին և ծնողներին զարգացնել դրական հարաբերություններ և ստեղծել աջակցող միջավայր երեխաների համար: Ուսուցիչների և ծնողների փոխազդեցությունը ոչ միայն հաջողակ կրթության բանալին է, այլ նաև նոր սերնդի համաչափ զարգացման և կրթության հիմնարար պայման:

Եզրափակելով, նշենք որ ուսուցիչների և ծնողների միջև փոխհարաբերությունները կարևոր դեր են խաղում յուրաքանչյուր երեխայի ապագայի ձևավորման գործում: Այս նախադրյալը նկատի ունենալով, եկեք ավելի խորը նայենք այս թեմային և այն դերերին, որոնք ուսուցիչներն ու ծնողները կարող են խաղալ երեխաների կյանքում և ընդհանուր առմամբ հասարակության մեջ:

Գլուխ 1

Ուսուցիչ-ծնող կապի կարևորության մասին

Ընդունակություններ ունենալն անհրաժեշտ է, սակայն ոչ բավարար: Այս կամ այն դասարանում քիչ չեն իրենց ընդունակություններով ու կարողություններով աչքի ընկնող աշակերտները, որոնք ունեն նաև անհանգիստ բնավորություն ու անզուսպ էներգիա: Նման աշակերտներից ոմանք հաճախ են անպատրաստ կամ թերի կատարած տնային աշխատանքներով ներկայանում դասի:

Հարցին լուծում տալու համար տվյալ դեպքում, ուսուցիչ-աշակերտ անընդհատ կապից բացի, պահանջվում է, իհարկե, ուսուցիչ-ծնող երկկողմանի մշտական փոխհամագործակցություն և փոխվստահություն: Բայց այս առումով կցանկանայինք ընդգծել հատկապես մի հանգամանք: Ծնողը պիտի խոսի իր երեխայի հետ: Խոսքը երեխայի ինքնաբուխ վարքի ճնշման, ձանձրալի բարոյախրատականի ու միալար հանդիմանությունների մասին չէ:Ծնողը պետք է ընկեր լինի իր երեխային, հաճախակի զրուցի նրա հետ կյանքից, մարդուց ու մարդկությունից, բարուց ու չարից, լավ ու վատից, հասարկությունից, արժեքներից, հայրենիքից, ծնողից, տնից, հազար ու մի կարևոր մանրուքներից: Այս բոլորն էլ ի վերջո կկազմեն այն դաստիարակությունը, այն արժեքային համակարգը, որ ծնողը կտա կամ կփոխանցի իր զավակին:Մարդկային կյանքը լուցկու տուփի նման է. նրան շատ լուրջ վերաբերելը ծիծաղելի է, անլուրջ վերաբերելը՝ վտանգավոր: Մեր աշակերտների անմեղ-վտանգավոր այն տարիքն է, որ չարժի ոչ լուն փիղ դարձնել, ոչ էլ շատ հանգիստ լինել: Մեզանից յուրաքանչյուրն է հիշում մանկությունից մեր հոգին լցնող ու էությունը պարուրող այն նվիրական, անմնացորդ ՀԱՎԱՏԸ, որն ունեինք ծնողի ամեն մի խոսքի, գործի նկատմամբ:Հիմա մեր աշակերտները նույն այդ տարիքում են: Ու հիմա է, որ նրանց միտքն ու հոգին մաքուր գրատախտակ են հիշեցնում, ու ինչ գրենք, այդ էլ կտպվի նրանց ուղեղում: Հաճախ ենք տրտունջներ լսում դասարանում աշակերտների վարքին, կարգապահությանը, շարժուձևին, դպրոցի, դասարանի նկատմամբ նրանց բացակայող կամ ոչ բավարար ուշադրության նկատմամբ ունեցած մեր խիստ վերաբերմունքի պատճառով: Ամենաքիչը ծիծաղելի է: Ի՞նչ ակնկալիք կարելի է ունենալ այն աշակերտից, որ դասերին հաճախում է հենց այնպես, առանց ուշադրության, առանց պատասխանատվության տարրական զգացումի, անտարբեր է իր դասարանի մաքրության, իր դասընկերոջ, իր աշխատանքային սեղանի կոկիկության, տետրի մաքրության, գեղեցիկ ձեռագրի և այլ նմանատիպ կարևոր մանրուքների նկատմամբ: Ի՞նչ ակնկալել այն աշակերտից, որ դպրոց է գալիս զուտ ընկերներին տեսնելու, նրանց հետ չարաճճիություններ անելու և ուրախ

ժամանակ անցկացնելու համար: Նման աշակերտին կարելի է «փրկել» միայն կարգապահությամբ: Չի կարելի դասի գալ, երբ հավես կամ տրամադրություն կա, և հակառակը՝ չգալ, երբ տրամադրություն չկա: Մի՞թե մեր այս «հավեսով» աշակերտներն են լինելու մեր վաղվա «հավեսով» ուսանողները, «հավեսով» քաղաքացիներն ու պետության «հավեսով» ղեկավարները: Մինչդեռ կարգապահությունը ու պլանավորվածությունը կարգավորում են մարդու էներգիան ու կյանքին հաղորդում այն տեմպոռիթմը, որը, վատագույն դեպքում, կօգնի բարձրացնել կյանքի որակը և, լավագույն դեպքում, կապահովի բարեկեցիկ, ապահով կյանք: Երկու դեպքում էլ շահողը մեր աշակերտն է լինելու, Ձեր երեխան և մեր ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Վերադառնալով ուսուցչի և ծնողի համագործակցությանը՝ հավելենք, որ ուսուցիչ-ծնող կապն աշակերտի ուսումնադաստիարակչական գործընթացի նպատակային և բարեհաջող կազմակերպման կարևորագույն բաղադրիչ օղակներից է: Մենք ունենք մեկ ընդհանուր նպատակ՝ կրթել, դաստիարակել, զարգացնել երեխային, ուստի մեր փոխհամագործակցությունը և միմյանց հետ մշտական կապ պահպանելը բխում է հենց այդ նպատակի իրագործումից, երկու կողմերի շահերից, բայց ոչ, երեք կողմերի շահերից. չմոռանանք աշակերտին, որն այս ողջ գործընթացի կենտրոնն է, այն կենտրոնը, որի շուրջ պտտվում է մնացյալ ամեն բան…

Ծնող(ներ)ի հետ համագործակցությունն անհրաժեշտ է ուսուցչի՝ աշակերտի հետ աշխատանքն ամբողջացնելու նպատակով: Մեծաքանակ աշակերտներով դասարան(ներ)ում ժամանակի սղության պատճառով հնարավոր չի լինում անհրաժեշտ ուշադրություն դարձնել, բավարար րոպեներ տրամադրել այս կամ այն աշակերտի գիտելիքների հիմնովին ստուգմանը /և ոչ միայն/՝ անկախ նրա առաջադիմությունից, ակտիվությունից և այլնից…

Այստեղ է, որ առաջին պլան է մղվում ուսուցիչ-ծնող փոխհամագործակցությունը՝ միասնական ուժերով վատթարագույն տարաբնույթ երևույթները արմատախիլ անելու և, գոնե, դրական անհրաժեշտ նվազագույնը սերմանելու նպատակով: Աշակերտի վարքի, համադասարանցիների հետ հարաբերություններում հարգանքի, ընկերասիրության, զսպվածության, ինքնատիրապետման ցուցաբերման, կոլեկտիվում ինքնադրսևորման ու միասնության պահպանման, այսինքն՝ լայն իմաստով անձի ձևավորման ու դաստիարակության հարցերը արդյունավետ լուծելու համար ուսուցիչը պետք է պատրաստակամ լինի լսելու և տվյալ աշակերտի հետ անհատական աշխատանքը պլանավորելիս նկատի ունենալու նաև ծնողի կարծիքը:

Աշակերտին ճանաչելու, նրա հոգեբանությունն ու վարքը արագ ըմբռնելու, աշակերտի վրա ազդելու, ներգործելու հարցերում ծնողի դերն անփոխարինելի է: Ծնողն իր հերթին պիտի լսի

և ընդունի այն նկատառում-դիտողությունները, որն անում է ուսուցիչը, եթե անգամ շատ դեպքերում համաձայն չէ: Եվ որպեսզի ծնողը անտեղի չհակադրվի ուսուցչին,ինքնանպատակ քայլեր չանի, անհրաժեշտ է վստահություն ուսուցչի նկատմամբ: Իսկ այդ վստահությունը պետք է վաստակել:

Կրթված և գիտելիքներով զինված սերունդ դաստիարակելիս ծնող-ուսուցիչ, ուսուցիչ-ծնող փոխհամագործակցության համատեղ աշխատանքի գլխավոր նպատակը նախ և առաջ աշակերտի ուսումնական առաջադիմությունն է: Ուր ուսումնական առաջադիմությունը, այնտեղ՝ գնահատականը: Ցանկացած ուսուցիչ բախվել է ու բախվելու է այդ հարցին՝ ծնողական եսասիրություն՝ իր երեխան լավագույնն է, նա արժանի է առավելագույն գնահատականի, իսկ ուսուցիչը կողմնապահություն է անում:

Ի դեպ, ծնողների ևս մի քանի սխալների մասին: Ի՞նչ զարմանալի սովորություն է կատարել տնային աշխատանքները երեխայի փոխարեն: Անգամ դեպք է եղել, որ ծնողն ընթացիկ գրավոր աշխատանքների տետրում գրել է աշակերտի փոխարեն: Թերևս անիմաստ է խոսել ուսուցչի, կրթության նկատմամբ անհարգալից վերաբերմունքի մասին, երբ ծնողը, որ չափահաս մարդ է, խոչընդոտում է իր երեխայի կրթության իրավունքի իրացմանը:

Գուցե ավելորդ է խոսել այդ մասին, բայց կարևոր է՝ ծնողը չպետք է երեխայի ներկայությամբ քննարկի դպրոցը, ուսուցչին: Նա, իհարկե, կունենա իր ճիշտ կամ սխալ կարծիքը, որը, անկեղծ ասած, տվյալ դեպքում առաջնային չէ: Աշակերտի ներկայությամբ քննարկելով, փնովելով դպրոցը, այս կամ ուսուցչին՝ ծնողը միայն փչացնում է իր երեխայի հոգեբանությունը, խոչընդոտում է սեփական երեխայի ճիշտ աշխարհընկալումը:

Ոչ երկրորդական պլանում է մաքրության պահպանումը,տարատեսակ հարցերում նրբանկատության,սրտացավության, հոգածության դրսևորումը: Նստարանների, առհասարակ դպրոցական գույքի, դասարանի, շրջապատի նկատմամբ հոգածություն պիտի դրսևորի յուրաքանչյուր աշակերտ, և սանի մեջ դրա սերմանումը ևս պետք է սկսել տանից և սեփական օրինակով: Այս ամենին կա մեկ լուծում՝ աշխատե՛նք միասին...

Ի՞նչ է նշանակում ծնողների ներգրավվածություն

Ինչպես գիտենք, ուսումնական գործընթացի մասնակից են հավարվում սովորողը, սովորողի ծնողը կամ օրինական ներկայացուցիչը և ուսուցիչը: Վերջիններիս իրավունքներն ու պարտավորությունները սահմանված են օրենքով: Ուսուցչը ուսումնական գործընթացի

հիմնական կազմակերպիչն ու իրականացնողն է, ով մեծագույն պատասխանատվություն է կրում սովորողի չափորոշչային վերջնարդյունքներին հասնելու համար: Սակայն այս տեսակետից շատ կարևոր է նաև սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցչի պատասխանատու վերաբերմունքը կրթական գործընթացին, վերջինիս կողմից ուսուցչի հետ համագործակցելու, սովորողին վերահսկելու ու առաջնորդելու գործառույթը: Ծնող-ուսուցիչ հաղորդակցությունը մեծ դեր է խաղում սովորողի կրթության որակի բարելավման համար, քանի որ ծնողներն ու ուսուցիչները հաղորդակցության ու համագործակցության ընթացքում միասին են սկսում հետազոտել սովորողի անձնային առանձնահատկությունները, ցանկություններն ու երազանքները, ինչը թույլ է տալիս վերջիններիս ավելի խորքային ճանաչել սովորողին ու հաշվի նստել նրա պահանջմունքների հետ: Ուսուցիչը սովորողի ընտանիքը ճանաչում է հենց նրա աչքերով, ավելին սովորողի վարքը հաճախ ուսուցչի ներկայությանմ կարող է տարբեր լինել, ուստի այս պարագայում 9 մշտական կապը սովորողի ծնողի հետ թույլ կտա անուղղակի կերպով կառավարել սովորողին: Կարծում ենք այս մշտադիտարկումը շատ կարևոր է, որպեսզի համագործակցող կողմերը կարողանան վստահ լինել, որ սովորողը իրենց երկուսի հետ էլ ազնիվ է և որևէ զարտուղի ճանապարհ չի գտնի անթույլատրելի արարքներ գործելու համար: Այստեղ շատ կարևոր է կողմերի միջև անվերապահ վստահությունը: Ծնողի համար ուսուցչի ու դպրոցի հետ մշտական կապը շատ կարևոր է, քանի որ դա նրան թույլ է տալիս մշտապես տեղեկություն ստանալ իր երեխայի մասին՝ լինի դա ուսումնառության հետ կապված դժվարությունների, հասակակիցների հետ խնդիրների, վարքային շեղումների, թե կրթական ձեռքբերումների մասին: Սովորողի բնականոն զարգացման ու դաստիարակության գաղափարն է միավորում ծնողներին և ուսուցիչներին, ուստի համագործակցությունը պետք է ուղղված լինի հենց այդ գաղափարի բնականոն ու արդյունավետ իրականացմանը: Ծնողների ներգրավվածությունը սովորողի դպրոցական կյանքին ոգևորիչ է նաև ուսուցչի համար, քանի որ դժվարությունների առաջացման ժամանակ, վերջինս կարող է հույս դնել ծնողական օգնության վրա:

Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն, քննությունների և թեստերի ավելի լավ արդյունքներ: Այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք այն շատ կարևոր գործոններն են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում: Սակայն, ինչպե՞ս կարող են ծնողները արդյունավետ ներգրավվել դպրոցական կյանքին, և

ինչպես կարող է դպրոցը նպաստել նրանց ներգրավվածությանը: Իրականում, ի՞նչ է նշանակում «ծնողների ներգրավվածություն»:

Ծնողների ներգրավվածություն» տերմինը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավմանը ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Այն միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն աշակերտի ակադեմիական առաջադիմության բարելավմանը: «Ծնողների ներգրավվածություն» նշանակում է ծնողների մասնակցություն կանոնավոր, բազմակողմանի կապերում, աշակերտի ուսման գործընթացում և դպրոցի այլևայլ միջոցառումներին:

1. Ծնողները կարևոր դեր են խաղում զավակի ուսման գործընթացում.
2. Ծնողները մասնակցում են դպրոցի կազմակերպած միջոցառումներին.
3. Ծնողները զավակների ուսման գործընթացում ներգրավված են որպես լիիրավ գործընկերներ և մասնակցում են երեխայի կրթության մասին որոշումների ընդունմանը

«Ծնողների ներգրավվածությունը» ծնողների համար կարող է նախատեսել.

- Դպրոցական միջոցառումներին հնարավորինս շատ մասնակցություն.
- Երեխայի կողմից լավ կատարված աշխատանքի խրախուսում և գովաբանում ծնողի կողմից.
- Դպրոցի համար ռեալ պահանջների նախանշում.
- Ուսուցիչների հետ կանոնավոր հանդիպումներ և իրենց երեխաների առաջընթացի քննարկում.
- Տնային առաջադրանք կատարելիս աշակերտին օգնության ցուցաբերում

Տնօրենների և ուսուցիչների համար ծնողի ներգրավումը դպրոցական կյանքում նշանակում է.

- Ծնողներին իրենց երեխաների առաջընթացի մասին համապատասխան տեղեկատվությամբ ապահովում.
- Ծնողների համար տեղեկատվության հաղորդում դպրոցի միջոցառումների մասին.
- Պարբերաբար հանդիպումների կազմակերպում աշակերտների առաջընթացի քննարկման նպատակով

Կարևոր է իմանալ, որ «ծնող» ասելով չպետք է հասկանալ միայն մայր կամ հայր: Ծնող կարող ենք անվանել այն բոլոր անձանց, ովքեր ներգրավված են երեխայի դաստիարակման գործում: Որպես օրենք, հայրն ու մայրը հոգում են երեխայի դաստիարակման ու կրթության համար, սակայն նրանցից բացի, հաճախ երեխայի դաստիարակման հարցում պատասխանատվություն են կրում տատիկը, պապիկը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, խորթ մայրը, խորթ հայրը, խնամակալը, դայակը և այլն: Այս հետազոտական աշխատանքում «ծնող» տերմինը նկատի ունի բոլոր այն անձանց, որոնք պատասխանատու են երեխայի դաստիարակման ու բարօրության համար:

Ծնողները և ուսուցիչները պատասխանատվություն են կրում միևնույն սովորողի կրթության ու դաստիարակության համար, հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի, երբ վերջիններս մշտապես կապ պահեն միմյանց հետ, ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, ինչպես նաև փորձեն համատեղ ուժերով մշակել դաստիարակչական մեխանիզմներն ու դրանց լուծման ուղիները: Այսպիսով, վստահաբար կարող ենք ասել, որ կրթական համակարգում ավելի լավ արդյունքների հասնելու, սովորողների կրթության ու դաստիարակության համար նպաստավոր պայմաններ ստեղծելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ: Իսկ ծնողները, առաջնային համարելով սեփական երեխայի լավ ու որակյալ կրթությունը, պետ է մշտապես համագործակցեն դպրոցի մանկավարժական աշխատողների, այլ սովորողների ծնողների հետ:

Գլուխ 2

Սովորողների ընտանեկան դաստիարակության ազդեցությունը դպրոցում վերջիններիս վարքի և առաջադիմության վրա

Ընտանիքը, որպես դաստիարակության միջավայր, նրա ազդեցությունն անձի դաստիարակության գործընթացի և արդյունքների վրա շատ կարևոր են երեխայի բնականոն զարգացման համար: Սա այն միջավայրն է, որտեղ ծնվում ու աշխարաճանաչողության սկզբնական քայլերն է անում մանուկը, պատանին դեռահասը, ուստի ծնողի, ընտանեկան միջավայրի ուղիղ ներգործությունը ողջ կյանքի վրա

ունենում է մեծ ազդեցություն: Երեխայի նկատմամբ իրականացվող ցանկացած գործողություն պետք է բխի նրա լավագույն շահերից: Երեխայի լավագույն շահերի ապահովումն ուղղված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված՝ երեխայի իրավունքների արդյունավետ և ամբողջական իրականացմանը, ինչպես նաև երեխայի զարգացմանը՝ հաշվի առնելով

երեխայի մտավոր և ֆիզիկական կարիքները, այդ կարիքների բավարարման համար համապատասխան խնամքի և դաստիարակության հնարավորությունը, ընտանիք վերադառնալու կամ ընտանիքի հետ ապրելու կարևորությունը, երեխայի զարգացման համար ծնողի և ընտանիքի այլ անդամների հետ շփվելու կարևորությունը, ազգային պատկանելության հարցը, երեխայի մշակութային, լեզվական, հոգևոր կամ կրոնական կապերը կամ դաստիարակությունն ու նշանակությունն ընտանեկան միջավայրում և այլ կարիքները, պահանջները և շահերը (այսուհետ՝ Երեխայի լավագույն շահեր) :

Կարևոր հանգամանք է երեխայի կարգավիճակը ընտանիքում: Այս հարցը նույնպես պետք է դնել ընտանիք-դպրոց համագործակցության ակունքում: Այս մասով իր կարևոր դերակատարում ունի ունի ուսումնական հաստատության սոցիալական մանկավարժը: Սոցիալական մանկավարժը, համագործակցելով բազմամասնագիտական խմբի մյուս մասնգետների հետ, ուսումնասիրում է սովորողների կյանքի պայմանները, ընտանիքի առանձնահատկությունները, ընտանեկան փոխհարաբերությունների ազդեցությունը սովորողի վրա, նրանց սոցիալական միջավայրը, շփումները, հետաքրքրությունները, հաղորդակցման դժվարությունները, սոցիալական միջավայրում հարմարման և

պաշտպանվածության մակարդակը, դուրս է բերում կարիքները և դրանց համապատասխան կազմում է միջամտության պլան, որը ներառում է կարիքների բավարարմանն ուղղված միջոցառումները, ժամկետները, պատասխանատուները : Որպեսզի դաստիարակչական

գործընթացն ընտանիքում անցնի արդյունավետ, հարկավոր է, ու ծնողներն առաջին հերթին բացառեն որևէ բռնություն, վատ կամ բացասական ներգործություն երեխայի վրա: Սա կարող է կազմաքանդել սովորողի բնականոն հոգեկան զարգացումն ու անդառնալի հետևանքներ ունենալ: Դաստիարակության գործում միշտ, այսօր առավելապես, կարևորվել է կարևորվել է երեխայի նկատմամբ ծնողի ճիշտ դրսևորուները: Ծնողական սերն ու հոգատարությունը

կենսական անհրաժեշտություն են երեխայի գոյապահպանման համար: Հակառակ դեպքում մի կողմից անտարբերությունն ու եսասիրությունը, մյուս կողմից ծնողական սիրո բացակայությունը հանգեցնում են ատելության, արհամարանքի՝ ծանրացնելով թե' երեխայի, թե' ծնողի կյանքը : Այսօր դպրոցում լրջագույն խնդիրներ են առաջանու�՝ կապված ծնողների որոշ մասի ինքնադաստիարակության հարցերի հետ, ուստի սովորողների հետ ունեցած որոշակի դժվարությունների հիմնական դրդապատճառները

կարելի է փնտրել հենց ծնողների մեջ: Ընտանիքը փոքրիկ հասարակություն է, որի

ամբողջականությունից է կախված մարդկային ամբողջ մեծ հասարակությունը: Կարգապահության լավագույն դպրոցը հենց ընտանիքն է, որի գլխավոր իմաստն ու նպատակը երեխաների դաստիարակությունն է: Իսկ երեխաների դաստիարակության գլխավոր դպրոցը ծնողների փոխհարաբերություններն ու վերաբերմունքն է միմյանց նկատմամբ: Ուստի, ընտանեկան դաստիարակության շատ դժբախտությունների արմատները թաղված են հենց այնտեղ, ուր ծնողները երեխային մանկությունից չեն սովորեցրել ղեկավարել սեփական ցանկությունները, չեն սովորեցրել ճիշտ վերաբերվել մեծերին, բարեվարք պահել շրջապատում: Առանց ընտանեկան ճիշտ դաստիարակության դպրոցում սովորողին կառավարելն ու վերահսկելը անչափ դժվար է ուսուցչի

համար: Այն ծնողներն են շահում, ովքեր երեխաների դաստիարակությունն իրականացնելիս ամեն ինչի չափը դարձնում են սովորույթ, բնավորության գիծ, ամենօրյա կանոն, ու դրանցով այնպես են առաջնորդվում, ինչպես օրենքը հարգող դատավորը: Ծնողները դասղեկի, ուսուցիչների անմիջական օգնությանմբ պարտավոր են սիրո զգացմունքներ դաստիարակել : Ծնողը պիտի ընկեր լինի իր երեխայի համար, հաճախակի զրուցի նրա հետ կյանքից, բարուց ու չարից, լավ ու վատից, հասարկությունից,

արժեքներից, հայրենիքից, ծնողից, տնից, հազար ու մի կարևոր մանրուքներից: Այս բոլորն էլ ի վերջո կկազմեն այն դաստիարակությունը, այն արժեքային համակարգը, որ ծնողը կփոխանցի իր երեխային:

Հաճախ ենք տրտունջներ լսում դասարանում սովորողների վարքից, կարգապահությունից: Իսկ ի՞նչ ակնկալիք կարելի է ունենալ նման սովորողներից, ովքեր դասերին հաճախում է հենց

այնպես, առանց ուշադրության, առանց պատասխանատվության տարրական զգացումի, անտարբեր են դասարանի մաքրության, աշխատանքային սեղանի կոկիկության, գեղեցիկ ձեռագրի և այլ նմանատիպ կարևոր մանրուքների նկատմամբ: Ի՞նչ ակնկալել այն աշակերտից, որ դպրոց է գալիս զուտ ընկերներին տեսնելու, նրանց հետ չարաճճիություններ անելու և ուրախ ժամանակ անցկացնելու համար: Նման

աշակերտին կարելի է փրկել միայն ճիշտ ու կանոնավոր դաստիարակությամբ, իսկ այստեղ կրկին կցանկանանք կարևորել ծնող-դպրոց կապը: Այսպիսով, կարծում ենք, որ որևէ կերպ չի կարելի անտեսել ծնողին: Եթե վերջինս չի պատկերացնում սեփական երեխայի ուսումնական հարցերում իր կարևոր դերակատարումը, ապա հարկավոր է, որ ուսուցիչը սկսի հենց այդ կետից՝ ծնողին բերել համագործակցային դաշտ: Ուսումնասիրելով սույն հետազոտության թեման՝ ձեռք բերեցինք ավելի խորքային գիտելիքներ, որոնք, վստահաբար, կաջակցեն մեզ մեր հոտագա մանկավարժական գործունեության ընթացքում:

Ծնողների ներգրավվածության նշանակությունը

Երբ ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, աշակերտն ավելի լավ ձեռքբերումներ է ունենում, չնայած այն բանին, թե ինչպիսին է ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, էթնիկական ծագումը կամ ծնողների կրթության մակարդակը:

- Աշակերտը, որի ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, ավելի հաջողությամբ է ավարտում դպրոցը և ուսումը շարունակելու ավելի լավ հնարավորություններ և պայմաններ ունի.
- Վիճակագրական տվյալներով, եթե ծնողները կապված չեն ուսուցիչների հետ կամ հետաքրքրված չեն դպրոցի առօրյա կյանքով, դրանց երեխաների ակադեմիական առաջադիմությունը մյուս երեխաների համեմատությամբ ավելի ցածր է.
- Երբ ծնողները ներգրավված են դպրոցի կյանքում, աշակերտներն ավելի դրականորեն են տրամադրված դպրոցի հանդեպ և սեփական անձի ու հնարավորությունների նկատմամբ ավելի շատ վստահություն ունեն.
- Այն աշակերտները, որոնց ծնողներն ակտիվորեն են ներգրավված դպրոցի կյանքում, ավելի լավ վարք ունեն, և նրանց դեմ կիրառված կարգապահական պատժամիջոցների միջին ցուցանիշներն ավելի ցածր են մյուսների համեմատությամբ.
- Դպրոցի կյանքին մասնակից ծնողների երեխաները ավելի լավ հարաբերություններ ունեն ինչպես ուսուցիչների, այնպես էլ ընտանիքի անդամների հետ.
- Տարբեր կուլտուրական միջավայրից դուրս եկած աշակերտները ավելի առաջադեմ են, երբ ծնողները և ուսուցիչները միասնաբար ձգտում են ընտանիքում և դպրոցում եղած կուլտուրական տարբերությունների համատեղ համաձայնեցմանը.

Ծնողների ներգրավվածությունը կարևոր է ինչպես աշակերտի ուսման արդյունքների բարելավման, այնպես էլ ծնողի ունակություն-հմտությունների զարգացման համար: Փոխվում է ծնողի սոցիալական, զգացմունքային կողմը և անձնական հատկանիշները:

Երեխայի կրթության գործընթացին մասնակցելու հետևանքով ծնողը՝

- Ավելի է հասկանում սեփական երեխային.
- Ավելի մեծ ուշադրություն է հատկացնում երեխայի սոցիալական, զգացմունքային և մտավոր զարգացման անհրաժեշտություններին.
- Դառնում է ավելի հոգատար, ավելի նվազ խիստ որդու հանդեպ և ավելի շատ է

գնահատում որդու ձեռքբերումները.

- Դառնում է ավելի ինքնավստահ և հաճույքով կցվում է երեխայի կրթության և դաստիարակության գործընթացին.
- Ավելի ինքնավստահ է որոշումներ կայացնելիս.
- Ավելի շատ ուշադրություն է դարձնում սեփական գիտելիքների մակարդակին և ունակություն/հմտությունների բարձրացմանը.
- Ավելի առաջադիմորեն է օգտագործում այկևայլ հնարավորությունները սեփական ընտանիքի և որդու կարիքների բավարարման հմար.
- Երեխային տալիս է հնարավորություն, ավելի վստահորեն արտահայտելու սեփական տեսակետները, հիմնխնդիրները: Ավելի դրական հարաբերություններ է ստեղծում իր երեխայի ուսուցիչների հետ:
- Ավելի լիիրավ է տիրապետում երեխայի վիճակի մասին տեղեկությանը և ժամանակին միջոցներ է ձեռք առնում նրա հիմնխնդիրները լուծելու նպատակով:

Ծնողների հետ ակտիվ համագործակցումն օգնում է ավելի ինքնավստահ դառնալուն:

- Ուսուցչի մոտ հանդես է գալիս ավելի հարգանք սեփական մասնագիտության նկատմամբ.
- Նրանք ավելի են բավարարված իրենց մասնագիտությունից և նրա արդյունքներից.
- Ծնողների ներգրավվածությունը բարձրացնում է ծնողի և ուսուցչի միջև կապվածության որակը, ինչը օգնում է ուսուցչին պարբերաբար ստանալ սպառիչ տեղեկություն երեխայի մասին: Աշակերտի անհատական կարիքների կարգավորումը ուսումնական գործընթացի կողմից ուսուցչին ցանկալի արդյունք կտա
- Ծնողների ներգրավվածությունը դրականորեն է ազդում ընդհանրապես դպրոցի վրա ևս.
- Դպրոցը ծնողների կողմից ավելի աջակցում ունի.
- Աճում է դպրոցի հեղինակությունը հասարակության մեջ.
- Դպրոցական ծրագրերը, որոնցում մասնակցում են ծնողները, ավելի հաջողված են, քան այն ծրագրերը, որոնցում ծնողները չեն մասնակցել.
- Այն դպրոցում, որտեղ աշակերտների հաճախումը ճատ ցածր է, ծնողների ներգրավվածության բարձրացումից հետո այդ ցուցանիշը բացահայտորեն կբարելավվի:

Ուսուցիչ և ծնողներ. հարաբերությունների համակարգ

Մարդիկ միշտ շփվել են, շփվում են այսօր և կշփվեն ապագայում: Ուսուցիչների և ծնողների միջև հաղորդակցությունն ունի իր առանձնահատկությունները: Նրանց շփումը քայլ է դեպի

փոխըմբռնում, քայլ դեպի վստահություն ձեռք բերելու, հոգևոր և հուզական արժեքների փոխանակում, մանկավարժական փորձի յուրացում, գիտելիքներ, որոնք ուսուցիչներն ու ծնողները փոխանցում են միմյանց:

Ուսուցչի մասնագիտության անբաժանելի, կարևոր և միևնույն ժամանակ դժվար մասն է ծնողների հետ հարաբերությունները:

Աշակերտներին կրթելու հաջողությունը կախված է ոչ միայն ուսուցչի վերաբերմունքից իր պարտականություններին, պատրաստվածությունից, բարոյահոգեբանական բնավորությունից, այլև անմիջական միկրոմիջավայրի ազդեցությունից, որում ապրում և դաստիարակվում են երեխաները:

18-րդ դարի ավելի շատ ֆրանսիացի լուսավորիչներ ուշադրություն հրավիրեցին այն փաստի վրա, որ սոցիալական միջավայրը, մարդկային շփումների ոլորտը որոշիչ գործոն է անհատի, հատկապես՝ բարոյական զարգացման գործում: Ներկայումս մարդկային շփումների շրջանակն անչափ ընդլայնվել է, մասնավորապես, զանգվածային լրատվության միջոցների զարգացման շնորհիվ: Բայց տեղեկատվության ոչ մի տեխնիկական միջոց, ինչ ինտենսիվության էլ որ հասնի, երբեք չի փոխարինի անմիջական շփումներին, որն իրականացվում է սոցիալական միկրոմիջավայրում: Այս միջավայրը փոխվում է մարդու կյանքի տարբեր փուլերում: Բայց միկրոմիջավայրի ձևերից մեկը մնում է անփոփոխ, և ինչպես գիտենք դա ընտանիքն է:

Ինչպես ցույց են տալիս բազմաթիվ հետազոտություններ, ընտանեկան կրթությունը խորը հետք է թողնում մարդու բարոյական որակների ձևավորման վրա: Ընտանիքն այն առաջնային կոլեկտիվն է, որտեղ երեխան ձեռք է բերում որոշակի կենսափորձ և միանում հասարակության մեջ տիրող բարոյական նորմերին:

Դպրոց է գալիս յոթ տարեկան մի տղա, ով արդեն պատկերացումներ ունի լավի ու վատի, գեղեցիկի ու տգեղի մասին: Ուսուցիչը պետք է իմանա ոչ միայն, թե ինչ գաղափարներ են ձևավորվել երեխայի մոտ, այլև ինչ պայմաններում է տեղի ունեցել այդ ձևավորումը: Ուստի նրա համար կարեւոր է կապ հաստատել աշակերտների ծնողների հետ, նրանց դաշնակից դարձնել կրթության հարցում:

Կարևոր է, որ ուսուցիչները և ծնողները դառնան փոխադարձ հետաքրքրություն ունեցող մարդիկ, որոնց ընկերական հաղորդակցության կարիքները կդառնան բնական, օրգանական և հիմք կծառայեն հարաբերությունների ողջ համակարգի համար:

Ամենից հաճախ ուսուցիչների ակտիվ ազդեցության տակ են գտնվում, այսպես կոչված, դժվար երեխաների ծնողները, ովքեր դպրոց են բերում ընտանիքում իրենց վարքագծի բացասական փորձը: Իսկ եթե երեխան արտաքինից շեղումներ չի ցուցաբերում բարոյական նորմերից, ուսուցիչը չի անհանգստանում նրա ճակատագրով, նրան քիչ է հետաքրքրում տնային կրթությունը, ընտանեկան հարաբերությունները: Դժվար թե ընտանիքի և դպրոցի միջև փոխգործակցության նման պրակտիկան ընդունելի և արդյունավետ համարվի:

Ուսուցիչների և ծնողների միջև հարաբերությունները կառուցվում են միջնորդի միջոցով, այսինքն՝ աշակերտի միջոցով, ով ընդգրկված է երկու միկրոմիջավայրերում, որոնք ինքնավար կերպով ազդում են նրա վրա՝ դպրոց և ընտանիք: Այս երկու միկրոմիջավայրերը պետք է միաձուլվեն: Ուսուցիչը պետք է դառնա ընտանեկան միկրոմիջավայրի մի մասը (որպես ծնողների ամենամոտ խորհրդականը երեխաների կրթության և դաստիարակության հարցում), իսկ աշակերտի ծնողները պետք է դառնան նրա դպրոցական միկրոմիջավայրի մի մասը (որպես ընդհանուր մանկավարժական գործընթացի մասնակիցներ):

Միկրոմիջավայրի նման միաձուլման, իրական փոխըմբռնման, փոխադարձ խնամքի, փոխօգնության և հարստություն կազմող ամեն ինչի շնորհիվ հնարավոր է ուսանողի անմիջական միջավայրում բարոյական հարաբերությունների մշակույթը:

Ընտանիք-դպրոց բարոյական հարաբերություններն ուսումնասիրելիս կա ևս մեկ հանգամանք. դպրոցը կա՛մ զարգացնում է երեխայի բարոյական հատկանիշները, որոնք սերմանվում են ընտանիքում, կա՛մ ստիպում են նրան վերադաստիարակել: Երկու դեպքում էլ ուսուցիչը պետք է իմանա ընտանիքում տիրող կոնկրետ բարոյական իրավիճակը, և ծնողները պետք է իմանան ուսուցչի մանկավարժական և բարոյական պահանջները: Առանց այս փոխադարձ ծանոթության անհնար է իրականացնել երեխաների բարոյական զարգացման մանկավարժական կառավարում, հաջողությամբ իրականացնել մանկավարժության սկզբունքներից մեկը՝ ընտանիքի և դպրոցի պահանջների միասնության սկզբունքը: Այս սկզբունքը հիմնված է խորը փոխըմբռնման և երեխաների ճակատագրի համար

պատասխանատվության վրա:

Աշակերտների ծնողների հետ հարաբերություններում ուսուցիչը առաջատար դեր է խաղում: Բայց, ցավոք, միշտ չէ, որ ուսուցիչը կարողանում է այս դերը կատարել՝ համագործակցելով աշակերտների ծնողների հետ: Որովհետև ուսուցիչն իր բարոյական հեղինակությունից բացի այլ ուժ չունի, և նաև այն պատճառով, որ ստիպված է կապ հաստատել տարբեր ծնողների հետ: Ուստի ուսուցիչները պետք է հիշեն աշակերտների ծնողների հետ արդյունավետ փոխգործակցության որոշ կանոններ.

- ծնողները կարիք ունեն աջակցության, օգնության և լավ խորհուրդների.
- ձգտել գործարար հարաբերություններ հաստատել ծնողների հետ.
- ակտիվորեն ներգրավել ծնողներին երեխաների հետ կրթական աշխատանքում, ապավինել նրանց օգնությանը.

Ծնողների և ուսուցիչների հանդիպումների ժամանակ խոսել պլանների, ամբողջ դասարանի խնդիրների, և ոչ թե միայն որոշ երեխաների մասին.

Եզրակացություն

Ուսուցիչների և ծնողների միջև փոխհարաբերությունները չափազանց կարևոր են երեխաների կրթության և զարգացման համար: Ուսուցման գործընթացում կարևոր է պահպանել գործընկերությունն ու համագործակցությունը այս երկու հիմնական կողմերի միջև: Եզրափակելով, ծնող-ուսուցիչ հաջող փոխհարաբերությունները հանգեցինք հետևյալ եզրահանգումներին.

1. Ապահովել աջակցող ուսումնական միջավայր.

Ծնողները և ուսուցիչները կարող են միասին աշխատել՝ ստեղծելու համապատասխան ուսումնական միջավայր, որը նպաստում է ուսմանը:

2. Աջակցել ուսման հաջողությանը.

Ծնողները կարող են աջակցել ուսուցիչներին իրենց երեխաներին կրթելու և ուսումնական գործընթացին մասնակցելու ջանքերում:

3. Խնդիրների և դժվարությունների լուծում.

Երբ ուսուցիչներն ու ծնողները միասին աշխատում են, նրանք ավելի հեշտությամբ կարող են բացահայտել և լուծել ուսման և վարքագծի խնդիրները, որոնց բախվում են երեխաները:

4. Մոտիվացիայի և կարգապահության խթանում.

Երեխաներին դաստիարակելու ուսուցիչների և ծնողների համատեղ ջանքերը կարող են օգնել զարգացնել այնպիսի կարևոր հմտություններ, ինչպիսիք են մոտիվացիան, կարգապահությունը և պատասխանատվությունը:

5. Վստահության ձևավորում.

Ուսուցիչների և ծնողների միջև բաց և ազնիվ հաղորդակցությունը վստահություն է ձևավորում և ապահովում ցանկալի արդյունք:

Ի վերջո, ուսուցիչների և ծնողների միջև հաջող համագործակցությունը հարստացնում է երեխաների կրթական փորձը և օգնում է նրանց հասնել բարձր արդյունքների թե՛կյանքում, թե՛ ուսման մեջ:

Գրականության ցանկ

1. http://kargiskola.ge/parent/pdf/PE_GUIDE_Armenian.pdf " Ծնողների ներգրավվածությունը " ԹԲԻԼԻՍԻ 2015
2. Յու. Ամիրջանյան, Ա. Սահակյան, «Մանկավարժություն», Երևան, 2005:
3. https://atmr.ru/media/uploads/%D1%80%D0%BE%D0%B4%D0%B8%D1%82%D0%B5%D0%BB%D1%8C_%D0%B8_%D1%83%D1%87%D0%B8%D1%82%D0%B5%D0%BB%D1%8C.pdf
4. Марьяна БЕЗРУКИХ " Родитель и Учитель " Екатеринбург Рама Паблишинг 2010
5. http://spschool4.narod.ru/files/izdat/03.10.2019_leonova_3.pdf «Учитель и родители: система взаимоотношений. Психолого-педагогические правила и способы установления контактов с семьями» 09.01.2018 г. Москва
6. В. Писаренко, И. Писаренко. Педагогическая этика. Минск, 1986
7. Профессиональная культура учителя / Под ред. В.А.Сластенина. - М., 1993.